

# ԻՆՔՆԻՇՆԱԿՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ընթերցանության ժամանակ՝ 5 րոպե



«Հիերարխիկ կառուցվածք ունեցող պետությունն անհրաժեշտ է հասարակության հակամարտող անդամների միջև խաղաղություն հաստատելու համար: Բայց չկա այնպիսի մի համաշխարհային պետություն, որը երկրներին զսպաշապիկի մեջ կպահեր խորքային անհամաձայնությունների դեպքում: Իրականությունն այն է, որ միջազգային հարաբերությունների համակարգի կառուցվածքն անարխիկ է, այլ ոչ՝ հիերարխիկ: Իր հերթին, անարխիկ չի նշանակում քաոսիկ: Դա պարզապես նշանակում է, որ չկա վերջնական արբիտր: Անարխիկ համակարգում ուժեղներն անում են այն ամենը, ինչ կարող են, իսկ թույլերը կրում են տատապանքի իրենց բաժինը:

Պետությունները երբեք չեն կարող վստահ լինել այլ պետությունների մտադրություններում: Սա նշանակում է, որ գոյատևելու լավագույն միջոցը մրցակիցների համեմատ հնարավորինս ուժեղ լինելն է: Հետևաբար, պետությունները ձգտում են առավելագույնս մեծացնել իրենց վերահսկողության տակ գտնվող ռազմական ակտիվները: Իշխանության համար այս գրոյական գումարով մրցակցությունը, որը երբեմն հանգեցնում է պատերազմի, այն է, ինչը միջազգային քաղաքականությունը դարձնում է անողոք ու խարդավանքներով լի»:

## **Տոն Միրշայմեր, Չիկագոյի համալսարան**

«Ինչպես ասում են անգլիացիները, ազատության գինը հավերժ զգոնությունն է: Բայց զգոն լինելու համար պետք է ճանաչել սեփական իրավունքները: Հետևաբար, կարևոր է իմանալ, թե ինչի վրա է խարսխված մեր ազատությունը, և որքանով պետությունն իրավունք ունի այն սահմանափակելու: Այլ կերպ ասած, պետք է խիստ սահմաններ դնել մի մարդու՝ մյուսներին ղեկավարելու իրավունքի վրա: Սա, հիրավի, քաղաքականության տիրույթն է»:

## **Պիեր Էլիոթ Թրյուդո**

Մենք պետք է տարբերակենք ինքնիշխանության երկու տեսակ՝ ներքին և արտաքին: Ներքին հարցերում Կատարի Էմիրն ավելի մեծ իրավասություններ (կամ ինքնիշխանություն) ունի, քան Միացյալ Նահանգների Նախագահը՝ այն պարզ պատճառով, որ ամերիկյան հասարակությունը խիստ սահմաններ է դրել «մի մարդու՝ մյուս մարդուն ղեկավարելու իրավունքի վրա»:

Այդուհանդերձ, միջազգային հարաբերություններում ինքնիշխանության հարցն ավելի բարդ է: Երեք հիմնական ռազմական գերտերությունները՝ ԱՄՆ-ն, Չինաստանը և Ռուսաստանը, աշխարհի ամենաինքնավարներ երկրներից են, սակայն նույնիսկ նրանց ինքնիշխանությունը սահմաններ ունի: Այս երեք ուժերն էլ ունեն ազդեցության գոտիներ, որոնք սահմանվում են աշխարհագրական կամ տնտեսական շահերի հիմքով: Ավելի փոքր երկրներին, որոնք կարծում են, թե «ազդեցության գոտիների» դարաշրջանն ավարտվել է, վիճակված են լուրջ փորձություններ:

Պատկերացնենք, որ Կանադան և Չինաստանը՝ երկու ինքնիշխան պետություններ, որոշում են կայացնում Կանադայում Չինաստանի

**Թարգմանություն.**  
Բևորինակը  
անգլերենով է



**FUTURES STUDIO**

Think to connect!

ոազմական բազա հիմնել: Դա մի քայլ է, որն ԱՄՆ-ն երբեք թույլ չի տա: Շատ բան չի փոխվել 19-րդ դարում Մոնրոյի հայեցակարգի՝ շրջանառության մեջ դրվելուց ի վեր: Ինչու՞ Ռուսաստանը կամ Չինաստանը չպետք է ունենան Մոնրոյի հայեցակարգին համարժեք մոտեցումներ:

Պետք է հիշենք նաև, որ հզոր ոազմական տերությունները կարող են օրենքից վեր լինել, և հաճախ այդպես էլ կա: Այս հարցում էմպիրիկ ապացույցները ավելի քան խոսուն են: Ուստի, ավելի փոքր պետությունները, որոնք գոյություն ունեն ոազմական տերությունների ազդեցության գոտիներում, պետք է անեն հնարավորը գերտերություններին չգրգռելու համար:

Ներկայումս Սինգապուրը բարդ իրավիճակում է: Այն գտնվում է Չինաստանի և ԱՄՆ-ի շահերի բախման խաչմերուկում, և Սինգապուրի ներկայիս վարչապետն այդ առիթով անթաքույց արտահայտել է իր մտահոգությունները 2020 թ. Foreign Affairs ամսագրում լույս տեսած **«Վտանգված ասիական դարաշրջանը»** հոդվածում: Փոքր պետությունների համար ամենավատ դիրքը երկու ոազմական տերությունների շահերի բախման խաչմերուկում գտնվելն է:

### Եզրակացություն

Ինքնիշխանությանն առնչվող ոազմավարությունը բաղկացած է երեք մասից. **առաջին**՝ ժամանակակից, մասնագիտացված և լավ կրթված զինված ուժեր, **երկրորդ**՝ իմաստուն, լավ կրթված արտաքին քաղաքական թիմ, որը վստահելի հարաբերություններ կկառուցի և կպահպանի տարածաշրջանի հիմնական ոազմական տերությունների հետ: Եվ **երրորդ**՝ ներքին ինքնիշխանության ճիշտ բաշխում տարբեր ինստիտուտների միջև:

*Դավիթ Թամադյան  
Հիմնադիր գործընկեր*

## Դրույթներ և պայմաններ

### © «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: